ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 23 » հունվարի 2019թ N 3

ԼԻԼԻԹ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ,163-րդ հոդվածներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1599-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Գրիբոյեդովի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Գաբրիելյանի 2019 թվականի հունվարի 10-ի դիմումը.

կարգադրում եմ՝

1. 2019 թվականի փետրվարի 1-ից Գրիբոյեդով համայնքի «Գրիբոյեդովի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Գաբրիելյանին տրամադրել արձակուրդ 10 աշխատանքային օր տևողությամբ՝(նախորդ տարիների չօգտագործած արձակուրդից 5 օր և 2019 թվականի ամենամյա արձակուրդից 5 օր):

2. Լիլիթ Գաբրիելյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի փետրվարի 15-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի հունվարի 23
Գրիբոյեդով համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 25 » հունվարի 2019թ N 4

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝համայնքում սգո արարողությունների համար ծաղկեպսակների ձեռք բերման նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին / Ս. Գրիգորյան / `սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Հանձնաժողովին / Ս. Գրիգորյան /`սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ավագանու անդամ `Սարգիս Նազարյանին / համաձայնությամբ/:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի հունվարի 25
Գրիբոյեդով համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ղեկավարի
2019 թվականի հունվարի 25-ի
N 4 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Գրիգորյան համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Լ.Գևորգյան աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Դ. Շուշանյան աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ-Ղուկասյան